ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

№ 3—4, 1944

Մ. Ներսիսյան

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ 1812 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Նապոլեոնի դեմ ռուս ժողովրդի մղած 1812 թվականի հայրենական պատերազմի մասին կան ոչ քիչ քանակությամբ հուշեր և ուսումնասիրություններ։ Այդ պատերազմի վերաբերյալ արդեն ստեղծվել է հարուստ գրականություն, ինչպես ռուսերեն, այնպես էլ եվրոպական այլ լեզուներով։ Հայրենիքի անկախության և ազատության համար ռուս ժողովրդի մղած այդ հերոսական պայքարի պատմությամբ զբաղվել են շատ նշանավոր դեմքեր։ Սակայն, չնայած դրան, մեր արխիվներում կան 1812 թվականի հայրենական պատերազմի վերաբերյալ, դիտական և գրական շրջաններին դեռևս անհայտ մնացած, մի շարք արժեքավոր փաստաթղթեր։

Արխիվային պրպտումների ժամանակ Մատենադարանի (Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետին կից Ձեռագրերի ուսումնասիրության ինստիտուտի) արխիվային բաժնում, ինչպես նաև Պետական կենտրոնական արխիվում, հաջողվեց գտնել բավական թվով անտիպ, մինչև այժմ անհայտ նյութեր 1812 թվականի հայրենական պատերազմի մասին։ Այդ նյութերի ամբողջական հրատարակությունը թողնելով ապագային, մենք, այնուամենայնիվ, ավելորդ չենք համարում այժմ հրատարակել նրանցից մի քանիսը։

Ստորև հրատարակվող չորս փաստաթղթերից առաջինը Կովկասի կառավարչապետ և Կովկասի ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Նիկոլայ Ռտիշչևի նամակն է, ուղղված Եփրեմ կաթողիկոսին։ Նամակը, որ գրված է 1813 թվականի հունվարի 17-ին Թիֆլիսում, ռուսերեն է և պահվում է Մատենադարանի արխիվային բաժնում (տես՝ «Կաթողիկոսական դիվան», 1813 թ., թղթապանակ № 24, վավերագիր № 8)։ Ահա ըստ ամենայնի հետաքրքիր այդ նամակը.

Святейший Армянский Патриарх Ефремъ
Милостивый Государь!

По долговременному пребыванию вашего святейшества в России, без сомнения вы изволите принимать участие в пользах и славе сей Империи, и любопытствуете знать о последствиях той ужаснейшей войны, каковую властелин Франции Напалеон, вооружив почти всю Эвропу им порабощенную, поднял на Россию и среди мира, который *Его Императорское величество* мой всемилостивейший *Государь Император* старался сохранить во всей ненарушимости, без объ-

явления войны, самым коварным образом сделал неслыханное нападение на пределы Российской Империи. Для чего пользуясь возвращением в Эчмиадзинский Монастырь высокопреподобного архимандрита Ефрема и надеясь через верное сообщение всех случивших произшествий. кои покрыли вечною славою победоносное оружия *Его Императорского величества*, доставить вашему Святейшеству удовольствие, мне весьма приятную уведомить вас о следующем;

Более нежели с 400 тыс. Армиею, составленною Напалеоном из войск одиннадцати Европейских держав им порабащенных, он вошел в пределы России. Но Его Императорским Величеством положено было намерено не остановлйвать первого стремления сего жадного неприятеля, а завлечь сколько можно далее во внутрь Империи, дабы удалив сим средством от источников силы его и подкрепления, изнурив войска трудними переходами и отняв способы к продовольствию, тем удобнее наказать за его дерзость, тем вернее нанести ему удар решительный и тем поспешнее возстановить в Европе порядок им разрушенный.

События же на самом опыте таковых, благоразумных и решительных мер принятых Российским Правительством хотя с немалыми пожертвованиями, вскоре открыло нам блистательнейшия последствия. Напалеон Алчностью своею к завоеваниям и ненасытным користолюбием привлеченный к самой столице Империи Москве, сверх чаяния своего не нашел в оной ничего кроме одних стен, вскоре почувствовал всю безразсудность намерении своих чтобы занятием сей столицы поколебать Могущественную и такую Империю, где сильное Российское воинство и все сословия народа соединены Единою во всех жарчайшею преданностию к всемилостивейшему своему *Монарху* и любовию к славе своего отечества. Усмотрев же тогда все силы и способы обращенные Российскою Империею на его истребление, он вотще обращался с разными коварными предложениями о мире и перемирии, они все остались решительно отвергнутыми. Почему изнуренный от недостатка в пропитании, изнеможенный частими пораженнями его войск и видя наконец все дальнейшия свои покушения уничтоженными через искусные распоряжения и мужество сильной и ежедневно умножающейся Российской Армии, неприятель принужден был обратиться со стыдом вспять прежнею дорогою по следам своего опустошения, и бежит ныне преследуемый голодом и зимними непогодами, болезнею и всюду поражающею Его превосходною Российскою Армиею, бросает на пути усталых своих больных и раненых, обозы, Артиллерию и все тяжести.

По побеге Напалеона из Москвы, которая 11-го числа прошлого октября месяца было занята Российскими войсками; многие французские корпусы в беспорядке ретирующиися были совершенно рассеяны, а другие вовсе истреблены. Ежедневно тысячи берутся в плен и Армия французская находится при последнем своем конце, будучи теперь теснима со всех сторон Российскою Армиею уже на самых

границах. Ибо все не только Руссийския Губернии, но и польские России принадлежащие совершенно очищены теперь от неприятеля.

Не считая нужным упоминать здесь раздельно о многих весьма важных победах в разные числа и разными Российскими Генералами одержанных над неприятелем, стоивших французам потери целых корпусов, за которые по всей России и в здешнем краю приносимо было Богу благодарственное моление, но описание коих было бы продолжительно, имею честь при сем случае вашему Святейшеству сообщить одно только то, что по общему счету присланному ко мне от Господина Государственного Канцлера Графа Николая Петровича Румянцева и прочих министров, потери в соединенной французской Армии с самого открытия сей кампании и со времени бегства Напалеона только по 16-е число прошлого ноября месяца, заключается во 150.183-х человеках нижних чинов, в 40 генералах и 1700 штаб и обер офицерах убитыми; далее в плен взято Российскими войсками французских Генералов 21-н, штаб и обер офицеров 1385 и нижних чинов 104.200 Сверх того во всех сражениях отбито у неприятеля 726 пушек, 33 знамя, 16 штандартов, 1200 пороховых ящиков, фур и других повозок с Богажем собственным Напалеоном и его Генералов более 2000. Ныне же через нарочно присланного ко мне фельдегера от *Его Императорского Величества* получены мною печатныя объявления служащия продолжением военных действий и преследования неприятеля, в которых по 29 ноября описаны еще вновь приобретенные важные победы над французами, как в полевых сражениях, так и при вытеснении их из всех городов в Российской Польше бывших в руках французов до Побега Напалеона. В сих сражениях усталые французы от многоразличных изнурении и ежечасной поражении теснящей их Российской армии по 29 число прогнанные уже к самим Прусским границам еще потеряли до 30 тыс. убитыми и ранеными, множесто артиллерии и обоза, робость и безсилие коих уже и сам *Император* французов не скрывает от остатков своих войск, столь сделалась сильною, что в сражениях его полки и корпусы с их генералами и знаменами кладут оружие и сдаются в плен прося себе пощады. Между тем победоносная Российская Армия не оставляя бегущего неприятеля, всеми своими многочисленными силами приближается уже к самим неприятельским Границам. И так при благости богопокровительствующего оружию *Его Императорского Величества* всемилостивейшего и великого *моего Государя Императора* и человеколюбивым намерениям, дабы возвратить Европе тишину и независимость, по всему кажется, что близко день падения Напалеона, и что Российской империи было предоставлено разрешить сей колос угрожающий всеобщим порабощением.

Таким образом сообщив вашему Святейшеству об успехах Российского оружия по сие время приобретенных над французами, я знавши участие какое вы по добродетельным свойствам вашим принимаете в делах относящихся до прекращения погубной войны меж-

ду Российскою Империею и Персидским правительством, побуждаюсь уважением моим к особе вашей, об'яснить с доверенностью прямые мысли и заключения мои по сему предмету.

Успехи Российского оружия, поразившего французское могущество, спасительны и для самой Персии. Ибо известно, что Напалеон всегда мечтал о завоевании Индии покорив сперва Персидские владения. Следовательно весьма неосновательны по мнению моему расчеты Тейранского кабинета, который уклоняется от мира с Российскою Империею на самых умеренных условиях предлагаемых Персии и надеется упорством и своими силами одержать верх над такою Державою, которой не могли поколебать и против которой сокрушились соединенныя почти всей Европы усилия. Притом как с нынешними успехами Российского оружия, мир в Европе неминуемо должен в скором времени последовать: то ужели от тонкой проницательности Персидского двора может скрыться та мысль, что когда у России одна только Персидская война на руках останется, то без сомнения избытки войск ея будут устремлены на усилие Армии действующие теперь в здешнем краю и что тогда неровная и решительная борьба может принудить Персидское правительство к заключению мира гораздо с вящими от него пожертвованиями, нежели какие *Его Императорское Величество* всемилостивейший и великий мой *Государь Император* по совершенной известности мне миролюбивых его расположений, готов еще и ныне принять от Персидского Правительства. В прочем поручая себе святым молитвам вашим с чувствованием особливейшего к вам почтения и совершенной преданности имею честь быть.

Вашего Святейшества Покорнейшей слуга

Николай РТИЩЕВ

17 Генваря 1813
Тифлис

Պատերազմական գործողությունների մասին կարևոր տեղեկություններ հաղորդելուց զատ, Ռտիշչևի նամակը միաժամանակ մի հետաքրքիր վկայագիր է այս մասին, որ 1812 թ. վերջերին և 1813 թ. սկզբներին ցարական կառավարության դեկավար շրջաններում ցանկություն է եղել հաշտություն կնքել Պարսկաստանի հետ։ Առանձնապես հետաքրքիր է այն հանգամանքը, որ Պարսկաստանին հաշտության բանակցություններ առաջարկելու համար ռուսական արքունիքում հաջող թեկնածու է դիտվել Եփրեմ կաթողիկոսը։

Երկրորդ փաստաթուղթը մի քաղվածք է Կովկասի քաղաքացիական նահանգապետ Մարկ Մալինովսկու՝ Եփրեմ կաթողիկոսին ուղղած մի նամակից։ Իր այդ նամակում Մալինովսկին մի շարք հարցեր շոշափելու հետ մեկտեղ խոսում է նաև ռուսական բանակների հաղթանակների մասին։ Նամակը գրված է 1813 թվականի հունվարի 23-ին, Թիֆլիսում։ Նամակը ռուսերեն է և պահվում է Մատենադարանի արխիվում (տես՝ «Կաթողիկոսական դիվան», 1813 թ., թղթապանակ № 24, վավերագիր № 10)։

Բերում ենք փաստաթղթի մեզ հետաքրքրող մասը։

Святейший и Верховный Патриарх всех армян
МИЛОСТИВЫЙ АРХИПАСТЫРЬ!

... Я считаю, что вашему святейшеству могу доставить приятное удовольствие, когда сообщу при сем последнеполученную выписку о знаменитых победах, оказанных Российскими войсками над французами вторгшимися было в истекшем году в наше любезное отечество, из коего все из них и их союзников до одного из России прогнаны, и из бывшего полумиллиона войск их, разве десятая часть убежала, оставя пушки и все тягости, а остальные или тела свои погребли в земле Руской; или остались в плену, где их по обыкновенному великодушию Русских, одели, и дают им надлежащее содержание, какового не имела вся их Армия, дошедшая наконец от побед и голода, до совершенного отчаяния и уничтожения...

Всепокорнейший слуга
МАРК МАЛИНСКИЙ

23 Генваря 1813 г.
Тифлис

Երրորդ փաստաթուղթը մի քաղվածք է այն նամակից, որ ոմն Խաչատուր Մելիքզարմյան գրել է Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցուն։ Նամակը գրված է 1813 թվականի մարտի 7-ին, Զմյուռնիայում։ Մելիքզարմյանը զանազան տեղեկություններ է հաղորդում Զմյուռնիայի իրականությունից և միջազգային անց ու դարձից։ Ի թիվս մի շարք հարցերի, նամակի հեղինակը կանգ է առնում պատերազմական անցքերի վրա և Աշտարակեցուն հաղորդում է այն բոլորը, ինչ որ հայտնի է իրեն այդ դեպքերի մասին։ Նամակը գրաբար է և պահվում է Մատենադարանի արխիվային նյութերի բաժնում (տես՝ «Կաթողիկոսական դիվան», 1813 թ. թղթապանակ № 25, վավերագիր № 18)։

Բերում ենք Մելիքզարմյանի վերը հիշված նամակի այն մասը, որ վերաբերում է 1812 թ. հայրենական պատերազմին։

Ամենացանկալի և երանաշնորհ Սրբոյ հօրդ իմոյ անկեղծ սիրով
սիրեցելոյ Տեառն Ներսեսի Շնորհալի և Գերիմաստ Արքեպիսկոպոսի
սրբոյ Աջոյ համբոյր կարօտսյ:

. . . Բոնաւորն Դաղղիոյ ծախեալ զհինգ ամ ի պատրաստութիւն պատերազմական պիտոյից, և հարիւր յիսուն հազար գաղղիական և բրուսիական զօրօք, ի վեռ ամառան դիմէ ի Լեհաստան խաղալ գլանել զերկիրն հիւսիսային տէրութեան, նա՝ հիւսիսայինն գործէ զգործ հին բռնաւոր իշխանին Ազուանից Միւրվէյիզի, որ ընդդէմ զօրաց հօրն Թահմազի Հիւսէյին Շահի, այրելով և աւերելով զքաղաքս և զգիւղս իւրոյ երկրի, մինչև ի Մոսկոյ, Յեալով Նորին զալստեանն Բոնաւորն ի քաղաքս քաղաքս ամբարեալ աւելի ըստ չափ զօրեան կարի և այլ պիտոյք յաշխարհին Բրուսիոյ դիմէ անաշխատ մինչ ի Մոսկոյ և պատերազմաւ մտեալ ի ներքս բացր քարաշէն որմոց տեսանէ ոչինչ. զի մինչ զբազմագին ապրանք վաճառականաց հրոյ էր վաճառեալ. վասն որոյ զօղնումն կալնու կնա և ցուրտ անտանելի շոշափէ զամենայն զօրս

նորին. և ի մէջ թշնամեաց Ֆռայ շրջապատեալ. ելեալ երկիցս մարանչի թողու զամենայն զանձս և զկէս իւրոյ զօրաց ի զերութիւն և մազապուրծ կիսակենդան մատանէ ի քաղաքաքաղիւղն որ մերձ է ի Վիլնայ քաղաք. ամենայն ձիք նոցա սատակին ի ցրտոյ. զհետ նորա վարեն ճէնրալն Հազախու իւր զօրօք և կրկին շրջապատեն, որոյ անճարացեալ հազիւ հազար զօրօք հոգեւոպառ անկանի իւր երկիր. և ինքն հնգետասան արամբ սուրհանգակաւ հասանի ի Փարէզ առ ի ամոքել զաղմուկ ապստամբութեան հասարակութեան. և զի զօրք Գազդիացւոց Ֆռացորդաց ամրացեալ էին ի քաղաքս քաղաքս ամուրս ե բերդաւորս յաշխարհին Ռրուսիոյ, քսան բանակաւ Հազախու զօրօք առաւ այն ամենայն քաղաք և ամենայն Գազդիացիք գերեցան. և գոին անակնուելի ամբարք բազումք զամենայն էանց ի ձեռս բուսաց. և գլխաւոր ճէնրալն Ռազդիոյ վեց հազարաւ ամրացեալ էր ի քաղաքն Տանցկայ, երթան և զնա շրջապատել. այդ ամենայն գերիք, որք անկան ի ձեռս բուսաց են 180 հազար, թող որք գերեցան ի ցուրտ և ի սուր. պատուական թոփք որք էին ինն հարիւր բոլորն գերեցան. յաշխարհն Ռրուսիոյ սրբապրեցին ի գերութենէ Գազդիոյ և նոցին արքայն միացեալ ընդ բուսս, ունի զիմել զէպի թշնամի. զօրք բուսաց եղեալն ի Ռրուս, է երկու հարիւր հազար ըստ զազեթային, որ նուաստս ընթերցայ. և խոստանայ ի սկիզբն դարնան զզօրս իւր հանել ի վեց հարիւր հազար թիւ։

Ռրբև առաջընթաց լինէր զունդն Գազդիոյ և մտանէր ի Մոսկոյ, աստ էր տեսանել Գալլիացւոց և գալլիական այլ ազգաց աւետաւոր լեզու, վարդացեալ զէմք և բանաստեղծական զովարանութիւնք առ բռնաւորն և տային նմա այնչափ հանճար հնարագիտութեան առ ի յաղթական առնել զիւր պայքար և ամենայն տնօրինութիւն նորա գերբնականութեամբ ճարտարարանէին, մինչ ինքեանք ՄԱՅԻՆ ի տարակուսի, թէ արդեսք ՌՎ ետ սորա իշխանութիւնս զայս չաստուածն Արամազդայ, թէ թշուառն Բելիար. են և ի սոցին կարգի և ի ազգս մեր քանիք։

Այլ յետոյ յաւուրս յաւուրս ձայն յաղթութեան ի հիւսիսային կուսէ ի Պոլիս առ դեսպանն իւրեանց հասեալ և անտի ուռ այսր տարածեալ, լինէր երկաքանչիւր կողմանց ներհակ պատմութիւն և ի լսելիս ամենեցուն շփոթալի դատողութիւն և իբրև հրամանաւ հիւսիսային իշխանութեան հանդէս հրապարակական յաղթանակի առնել դեսպանին պէտք լինէր երկիցս ի Պոլիս և ի մեր քաղաքս, առաջինն միայն ի ծովու որպէս նաւուց հարսանիք երէիւք աւուրբ պէս պէս զարգարազարդութեամբ և թոփաձգական հրճուանօք գեղակազմեցին. և յետ երկուց շաբաթուց առ կրկին յաղթութեան զհանդէս խրախանաց երկրորդեալ զլեղեցիկ-ապարանս իւրեանց բեհեզիւք և ծիրանեօք ոսկեհուս հանդերձիւք բարեզարդեալ կամարս ի դարնեայ ոստից յելուզմամբ բաղուս լուսաւորութեամբ գեղեցկալար ճրագարանօք պերճացուցին. և ի գիշերային խնճոյս ուտելեաց և ի ձայնս հրճուեցուցիչս բազմակերպ նուագարանաց զսիրելիս և զբարեկամս հրաւիրեցին։ Լինէր ապա դաղարումն բանից գազդիականաց ՄԱՅԻՆ միայն ի բան Սոգոնի փիլիսոփայի որ արար առ Կիւրոսս արքայ Լիւդացւոց։

Համրաւ տարածեցաւ, թէ Գերմանիս ի պատրաստի ունի զօրս 50 հազար և ունի կամակցել ընդ Բուսս և որոնել իսկ ի գիւտ կորուսեալ իւրոյ

երկրի․ բայց այս վերջի փոստիւ գայց ևս համբաւեցաւ թէ կայսերն պատահեցաւ մահ, այլ այսուսիկ տակաւ ոչ ստուգեցաւ։

Ծառայ մեծի Ցովհաննէս և մեծի Կարապետի
Խաչատուր Մելիքզարմեան

1813 մարտի 1-ին յԻզմիր.

Մելիքզարմյանի նամակն արժեքավոր է ավելի շատ այն տեսակետից, որ նա որոշ գաղափար է տալիս այն մասին, թե ինչպես են ընդունվել, ինչպիսի տպավորություն են թողել 1812—1813 թ.թ. պատերազմական անցքերը Թյուրքիայում, մասնավորապես Զմյուռնիայում և Կ. Պոլսում։ Հետաքրքիր է նաև այն երևույթը, որ Զմյուռնիայից գրող Մելիքզարմյանը ծաղրի է ենթարկում Նապոլեոնի ու նրա մերձավորների հոխորտանքները և ընդհանուր առմամբ համակրանք է ցուցաբերում դեպի Ռուսաստանը։

Չորրորդ փաստաթուղթը Բեսարաբիայի հայկական թեմի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսի մի նամակի վերջին երկու էջերն են։ Դժբախտաբար այդ նամակի սկիզբը պահպանված չէ և այդ պատճառով դժվար է ասել, թե ում է ուղղված այն։ Նամակը գրված է 1813 թ. Քիշինևում։ Ահա այդ նամակի մեզ հասած վերջին երկու էջերը, որ պահպանվում են Մատենադարանի արխիվային նյութերի բաժնում (տես՝ «Կաթողիկոսական դիվան», 1813 թ., թղթապանակ № 24, վավերագիր № 22)։

...Ցորում եկեալն էր. զօրքն Ռուսաց տեսանելով զփախուստ նորա, ոմանք յառաջոյ, ոմանք ի կողմանէ և ոմանք ի յետուստ անկանեն ի վերայ նորա և մինչև ցժամանումն նորին ի վերջին սահմանս Ռուսաց, ի քաղաքն Վիլնայ, մնայր ընդ իւր եօթն հազար միայն ի ընտիր զօրաց իւրոց. և զայն ի Վիլնայ թողեալ ինքն աճապարէր քանի մի հաւատարմօք իւրեան հպատակեալ արքայիւք և ֆերթմարշալօք մտեալ ի փոստ օտար անուամբ՝ այսինքն քնեաղ Մակտօնալի փախչիլ ի Փարէզ. և Ռուսք զհետ մտեալ տիրէին ամենայն Լեհաստանու, Փռուսիու և ամենայն ծովեզերեայ քաղաքաց, այսինքն Տանցիքայու, Սաքսոնիու, Պոմառանիու և անուանի մեծի քաղաքին Ղամպուրխու և ի սոյն տեղիս զկայ առեալ այժմ սպասեն զարնան և անկլիացոց օգնութեան, որ տիրեսցեն ի ծովէ և ի ցամաքէ երկրին Հօլանդայու։ Ի սոյն փախստեան Ռուսք գերեցին ի Գաղղիացոց աւելի քան երեք հարիւր հազար հոգիս, և մերձ երկու հարիւր հազար սպանին, հազար ինն հարիւր թոփս գերեցին. երկու հարիւր թոփս անկար զոլով դարձուցանել ընդ ինքեանս Գաղղիացիք, մեծամեծ գետս ընկեցին. եօթանասուն եռնարալս կենդանի վերեալս և 18 մեռեալս թողին յերկրի աստ, իսկ հարստութեանց և կողոպուտիցն ընաւ ոչ գոյ թիւ, զի զոր ինչ յափըշտակեցին յերկրէ աստի, բոլորն թողլոյն զկնի՝ յանձնեցին և բոլոր գանձսն իւրեանց, թողին ի գերութեան և զթագն արքայական, որով պսակելոց էր զգլուխ իւր Պօնապառթէ, անուանելով զինքն արքայ կամ կայսր Ռուսաց։ Գերմանացիք, որք օգնիչք էին Գաղղիացոց, այժմ յետս կասեցան թէպէտ Պօնապառթի փեսայն զարձոյց նոցա զբաղում քաղաքս որ յանիրաւի յափշտակեալ էր ի նոցանէ, զԲրեստն և զՎենիկն և այլ քանի մի անուանի և նշանաւոր քաղաքս, այլ և պապն զարձոյց ի Հռօմ, յանձնելով նմա ըստ յառաջնոյն զամենայն կառավարութիւն Արքայական։ Սպանիացիք բա-

զում արիական նախճիրս գործին ընդդէմ Դաղղիացոց և ամենայնի մաքրելով զտէրութիւնս իւրեանց ի նեղ արկեալ են զդաղղիայիս մտանելով ծանր զօրօք ի սահմանս նոցին, այնպէս և Փորթոքէզք՝ Ցուսալով ի խնամս արարչին, յայսմ ամի ակն ունիմք որ լինիցի ընդհանուր աշխարհի խաղաղութիւն, զնոյն տարածեսցէ Աստուած և առ ձեզ մաքուր ազօթիւք սուրբ հօրդ, զի վասն ծանր մեղաց մերոց ամենայն ժամու երկիրդ այդ որ գլխովին միխթարութիւն է մերս հոգւոյ, իբրև զծով խռովեալ ծփի՝ Այլ և գիտութիւն լիցի պատուական գլխոյդ իմոյ, որ զկնի հաշտութեան Օսմանցոց մնաս ինձ վիճակ հինգ եկեղեցիսն Պեզարատիու ուրն քահանայիւք և սակաւաթիւ ժողովրդովք որք կան բնակեալք ի Քիշնով և ի Ախքերման, ի Իսմայէլ, ի Օրհէյ և ի Հաղին, և այլն յանձնելով զիս ի խնամս հայրութեան ձերոյ

Մնամ ամենախոնարհ որդիական ծառայութեամբ՝
Գրիգոր Արքեպիսկոպոս Պեզարիպիու Հայոց

13 ապրիլի 1813
աւուր ծաղկազարդի
ի Քիշնով

Աժմ ընկալաք զլուր որ Անկլիացիք ընդ Շուէթից տիրեալ են Հոլանդիու...

Գտնվելով Քիշինեում, Գրիգոր արքեպիսկոպոսը մոտ էր կանգնած կատարվող անցքերին։ Նրա հաղորդած տեղեկությունների հավանականությունը, այդ պատճառով, ավելի մեծ է։

Վերը բերված, ինչպես նաև մեր արխիվներում պահվող այդ կարգի մյուս նյութերը, անկասկած, զգալի արժեք են ներկայացնում մեր պատմագրության համար։ Այդ նյութերի գիտական ուսումնասիրությունը, անտարակույս, կնպաստի ռուս ժողովրդի 1812 թվականի հայրենական պատերազմի բազմակողմանի լուսաբանման ու նրա լիակատար պատմության ստեղծման գործին։